

Լոռու մարզպետ
պարոն Հրանտ Մարգարյանին
ՀՀ քաղաքացի Արման Արմենի Գասպարյանից
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Թումանյան թղմ., 6/3 շ., բն. 12
Հեռախոսահամար՝ 094934488

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Մարգարյան,

Ես՝ հանդիսանալով Լուվենի Կաթոլիկ Համալսարանի ասպիրանտ ուսանող (քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն), զբաղվում եմ Հայաստանի Հանրապետությունում համայնքների մակարդակով կրթության և ճանապարհաշինության ծառայությունների մատուցման ուսումնասիրությամբ: Վերոհիշյալ հետազոտության շրջանակներում ցանկանում եմ մարզպետարանին հարցում ուղարկել՝ հետևյալ տվյալները ձեռք բերելու նպատակով՝

- համայնքների մակարդակով կրթության և ճանապարհաշինության ոլորտներում (ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների և կամուրջների կառուցում և պահպանում) 2014 թվականին իրականացված ծախսեր,
- համայնքների մակարդակով կրթության ոլորտին վերաբերող 2014 թվականի վիճակագրական տվյալներ, ներառյալ՝ կրթական հաստատությունների քանակ, դրանց վիճակ, կրթական հաստատությունների աշխատողների քանակ, աշակերտների քանակ և ցանկացած այլ վիճակագրություն, կրթական հաստատությունների տեխնիկական համալրվածության աստիճան և ցանկացած այլ վիճակագրություն, որ կվերաբերեր կրթական ծառայությունների տրամադրմանը,
- համայնքների մակարդակով ճանապարհաշինության ոլորտին վերաբերող 2014 թվականի վիճակագրական տվյալներ, ներառյալ՝ համայնքային և միջհամայնքային ճանապարհների, երկարություն, դրանց որակ, համայնքներում վերանորոգված ճանապարհների ընդհանուր երկարություն և ցանկացած այլ վիճակագրություն, որ կվերաբերեր ճանապարհաշինական ծառայությունների տրամադրմանը և որակին:

Հարգանքով՝

Արման Գասպարյան